

Ս. ՅՈՒՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ



ST. JOHN THE BAPTIST

Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի

Armenian Apostolic Church of Miami

Հովի

Church Address

Rector

~~Տ. ՎԱՀՐԱՄ Ե. ԱՐՁԱԿՅԱՆ~~

1501 N. E. 1st Avenue

~~RT. REV. VAHRAM NAZARETIAN~~

MIAMI, FLORIDA

904.12.1962

Գեր. Տ. Սիոն Ս. Արզեպոս. Մանուկեան  
Բարեխնամ Առաջնորդ Ամերիկահայոց եւ  
Նախագահ Պատ. Թեմական Խորհուրդի  
Նիու Եորք, Ն. Ե.

Սրբազան Հայր

Սրբազանութեանդ ուղղուած Մարտ 4 Թուակիր Նամակով տեղեկացուցած էի որ Ուէսթ. Ֆիլա. ի Միական Խորհուրդը փետր. 11-ի շաբաթականս կը մերժէ տալ. Մարտ 22ի Ձեր Նամակով Թելագրած էիք իրենց որ այս վճարումը կատարեն եւ ատկէ ետք անձնապէս եւս խօսած էիք Ատենապետին:

Միական Խորհուրդի Հերթական Նիստին այս հարցը կը ժեծուի եւ կ'որոշուի վճարումը կատարել: Ատենապետը շէքը իր գրպանը կը պտտցնէ երկար ժամանակ եւ հարցումներուն կը պատասխանէ "Սրբազանին պիտի դրկեմ Նամակով մը միասին" եւ սակայն հարցը մոռացութեան կ'ուտայ մինչեւ Ֆիլա. երթալս, երբ Հոգաբարձուներէն ոմանք ինձմէ զարմանքով լսեցին դրամ ստացած չըլլալս:

Հարցը դարձեալ Մի. Խորհուրդի Ժողովին կ'երթայ ուր Ատենապետը անտեղի եւ անպատշաճ արտայայտութիւններ կ'ունենայ իմ անարժան ըլլալուս եւ Առաջնորդին ալ հեղինակութեան դէմ. ոտնակոխելով անցեալ որոշում, հրահանգ խոստում եւ արժանապատուութիւն, որոշում մը եւս կանցնի շաբաթականս չըտալու: Արդ, Սրբազան Հայր, եթէ կը կարծուի այս հարցը կարգադրելը "Ձեր գործը չէ", Ձեր միջոցաւ կը դիմեմ Թեմ. Խորհուրդին այս սանձափակութեան վերջ մը դրուելու եւ հեղինակութիւն հաստատելու համար:

Կը փափաքիմ հետեւեալ կէտերը Ձեր ուշադրութեան յանձնել. -  
1-Առաջնորդի պաշտօնական Նամակը զիս Հովուութենէս կը դադրեցնէ ոչ թէ փետր. 11ին, այլ փետր. 18ին:

2-Առաջնորդի հրահանգով, վերադառնալու կարգադրութեամբ, փետր. 11ին Մայամի կը դրկուիմ:

3-Նոյն Կիրակին Մարկաւազներ ժամերգութիւն կը կատարեն միայն, որով ուրիշ եկեղեցականի ծախք եւ վճարում չըլլար:

4-Նոյն Կիրակին Մայամիէն չեմ վճարուիր որովհետեւ կարելի չըլլար Պատարագին հասնիլ. ճամբու ծախս միայն կը տրուի ինձի:

Իմ իրաւունքս եղող այս շաբաթականը վստահ եմ Թեմ. Խորհուրդը պիտի պարտադրէ որ վճարուի: Դրամէն աւելի, իմ արժանապատուութիւնս վիրաւորուած կըզգամ, մանաւանդ գիտեմ որ Ժողովուրդը անտեղեակ է անցած դարձածէն ու մի քանի վրէժխնդիր Հոգաբարձուներու քմահաճոյքին զոհ կ'երթայ եկեղեցական մը իր 12 տարիներու ծառայութեամբ:

Վստահ ըլլալով որ Սրբազանութիւնդ եւ Պատ. Թեմ. Խորհուրդը  
լաւազոյնը պիտի փորձէք արդարութիւնը տեղը բերելու  
համար,

կը մնամ սպասումով եւ որդիական սիրով

*Handwritten signature: Vahram Nazaretian*

Արժակից: *Handwritten signature: Vahram Nazaretian*  
Ղեւոն ԲՏՆՅ. Առաքելեան

Գեր.Տ.ՍԻՈՆ ԱՐԲ.ՄԱՆՈՒԿԵԱՆ  
ԱՄՐԵՋԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԱՅՈՑ ԵՒ  
ՆԱԽԱԳԱՀ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ  
ՆԻՒ ԵՕՐԲ

Գերապատիւ Սրբազան Հայր եւ Թեմական Խորհուրդի անդամներ,

Մայամիի Սուրբ Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ Միական Խորհուրդս իր որդիական սէրն ու յարգանքները կը մատուցանէ Ձեր սրբազնութեան եւ Թեմական Խորհուրդի Գերապատիւ եւ Արժանապատիւ Հոգեւոր Հայրերուն եւ աշխարհական յարգելի անդամներուն, պաշտօնական մեր այս նամակով:

Միական Խորհուրդս, վրդոված էր երբ մեր մէջէն մեր շատ սիրուած Հոգեւոր Հովիւր Արժ.Տ.Լեւոն ՔՏՅ.Արաքելեանը, առնուեցաւ: Մակայն երջանիկ եղանք թէ մենք եւ թէ մեր ժողովուրդը որ զինք աւելի բարձր պաշտօնի մը եւ պատասխանատու գործի մը հրաւիրեցիր:

Մեր նոր Հոգեւոր Հովիւր, Գերապատիւ Տ.Խաչակ Մ.Վրդ.Ղազարեանը, յաջորդը Տ.Լեւոնին, իր ցոյց տուած գործով, խօսքով եւ վարմունքով, երջանիկ ենք յայտնելու ամէնուրեք որ տեղը լեցուց մեր նախորդ Հովիւին: Մանօթ էինք իրեն մամուլէն երբ ինք տակաւին Յունահայոց Կաթողիկոսական Պատուիրակ եւ Առաջնորդն էր եւ կորովի պայքար կը տանէր յանուն Հայաստանեայց Եկեղեցւոյ եւ Մայր Աթոռ Ս.Էջմիածնի: Կիմանայինք որ ինք Վեհափառին հրամանով անցած էր Թուրքիա եւ աշխարհակն էր Պոլսոյ Պատրիարքին: Իժարդը պարզաներու տակ եկած էր Միացեալ Նահանգներ: Եւ Մայամիի այս Համայնքը երբ ընդունեց իր նոր Հոգեւոր Հովիւր, Գեր.Տ.Խաչակ Մ.Վրդ.Ղազարեանը, ահա անցնող հինգ ամիսներու ընթացքին, տեսաւ ու կը վկայէ որ ան մեր ժողովուրդի բոլորին սիրոյն եւ յարգանքին առարկան է այսօր: Իբրեւ իմաստուն եւ հմուտ քաղաքիչ, իբրեւ հոգիով Սուրբ Պատարագ մատուցանող, իբրեւ լուրջ եւ իր պաշտօնին գիտակից անձ եւ մանաւանդ իր պարկեշտ եւ աննիւթապաշտ նկարագրով, Միական Խորհուրդիս յարգելի եւ շատ սիրելի Հովիւն է:

Միական Խորհուրդս իր կարգին կը գիտակցի որ ամէնքս ալ մեր մարդկային թերութիւնները ունինք եւ շատ յաճախ ալ սխալ կը հասկցուինք եւ կը մեկնաբանուինք: Բայց ասիկայ չի նշանակէր որ մենք չունինք գիտակցութիւնը մեր գործին նուիրականութեան եւ պատասխանատուութեան:

Սրբազան Հայր եւ սիրելի անդամք Թեմական Խորհուրդի, մեր շեղման շնորհակալութիւնները կը յայտնենք Ձեզի, Մայամիի մեր Սուրբ արժանաւոր Եկեղեցական մը ղրկած ըլլալնուդ համար:

Թող Աստուած Հայաստանեայց Եկեղեցին պայծառ ու բարգաւաճ պահէ: Ձեզի կարողութիւն տայ Ձեր պատասխանատու մեծ գործին մէջ:

Մատչիմք ի համբոյր Ձեր աշոյն

ԱՏԵՆԱՊԵՏ՝ ԴԱՆԻԷԼ ՍԱՊԱԿԳԻՒԼԵԱՆ  
ԱՏԵՆԱՊԵՏ՝ ԽՈՍՐՈՎ ԳԱՐԻԻԷԼԵԱՆ  
ԳԱՆՁԱՊԱԿ՝ ՍՏԵՓԱՆ ԱՐՄԼԱՆԵԱՆ  
Անդամք, ճԱՆ ՓէՅԸ,  
ՃԻՔ ՅԱԿՈՐԵԱՆ  
Լեւոն ՄըՍԸՐԼԵԱՆ  
Ճիմի Պաթմէգեան

Մատչիմք ի համբոյր Ձեր աշոյն  
Stephan G. Arslanian  
James Gutmanian  
J. H. Hogue